— Չեմ կարող ասել, մի՛ հարցրու: Հայրս պատոիրել է, որ ոչ մի մարդու չասեմ:

— Ինչ՞ն էլ:

— Քեզ էլ:

Ես տեսայ, որ անկարելի էր Մարօից խօսք դուրս քաշել այս գաղտնիքի մասին, որովհետեւ Մարօն միամիտ աղջիկներից չէր: Եւ հարցրի.

— Ինչո՞ւ հայրդ պահում է իր մօտ մի այսպիսի մարդասպանին:

— Նրա համար, որ նա մարդասպան է:

— Լա՞ւ է մարդ սպանելը:

— Վատ մարդուն, ի հարկէ:

— Ուրեմն դու ինչո՞ւ Մըհէի վրայ բարկանում ես:

— Նրա համար, որ նա սպանեց շանը:

— Շունը մարդից լաւ՞ է:

— Շատ մարդերից, որոնք վատ են, ինչպէս քրդերը: Շունը մեր տունը պահում էր: Բայց քրդերը մեր տունը քանդում են:

«Իսկ եւ իսկ իր հօր կտորն է»... ասեցի ես իմ մտքում:

— Գիտես, Ֆարհատ, որքա՜ն գող են քրդերը. նրանց երեխաներն էլ գող են. հէնց որ օրօրոցից դուրս են թռչում, գողութիւն են անում: Անցեալ տարի մեր հաւերի ճուտերից ամէն օր մէկը պակասում էր, էնպէս որ տասներկու ճուտից մնաց երեքը: Ո՞վ է տանում, տէր աստուած: Հայրս ասում էր՝ քօրքօրան (ուրուրը) է տանում: Մըհեն ասում էր՝ աղուէսն է գողանում: Ես բակի բոլոր ծակերը բռնեցի, որ աղուէսը ներս չմտնի. մի ծակ միայն բաց թողի, որ գալու ժամանակ բռնեմ նրան: Գիշերը նստում եմ, մտիկ եմ անում, մտիկ եմ անում, աղուէսը չկայ: Ցերեկով մտիկ եմ անում, ագռաւն էլ չէ թռչում մեր կտուրի վրայով: Բա՛ ո՞վ է տանում ճուտերը: Մի օր տեսնեմ, մեր հարեւան քրդի աղջիկը, Գիւլին, մեր տան դռնիցը անց կացաւ, մտաւ մարագը, կանչեց՝ ճո՛ւ, ճո՛ւ: Ճուտերը նրա ձայնին սովորած էին, իսկոյն դուրս վազեցին: Նա կուտ գցելով, ճուտերին հեռացրուց, տարաւ մինչեւ մեր տան մօտի խրամը, իջաւ փոսի մէջ: Ի՞նչ սատանայ է: Ես վրայ հասայ, տեսնեմ՝ ճուտերից մէկը բռնել է, ուզում է տանել: «տօ, սատկած Գիւլի, ո՞ւր ես տանում մեր ճուտը», ասում եմ ես ու բռնում նրա ծամերից: Նա մատները գցեց, ուզում էր իմ երեսը ճանկռտել: Ես բռնեցի բողազից (շնչափողից), դրի տակս, խեղդում եմ, խեղդում, մինչեւ աչքերը դուրս թռան: Ափսո՜ս, որ Հասօն եկաւ, ձեռքիցս առեց: